Ան-ը յարմար տեսաւ օգտագործել 3-րդ յարկի ազատ սրահը իբրեւ երկրորդականի աշակերտներու հաւաքավայր: Տարբեր դասարաններու աշակերտներու միջեւ սերտ կապ հաստատուեցաւ այդ շնորհիւ:

4) ՍԵՌԱՅԻՆ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Նկատելով աշակերտներուն կարիքը ճիշդ աղբիւրներէ տեղեկութիւն ստանալու, Ան-ին առաջարկով դպրոցը կազմակերպեց աշխատանիստեր:

5) ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ան-ը կազմակերպեց Բարեկենդանի հաւաք, ուր երկրորդականի աշակերտները խաղցան, ծափուեցան եւ լաւ ժամանակ անցուցին student lounge-ին մէջ:

6) ԲԱՅՕԹԵԱՅ ԽԱՂԵՐ

Տարուան առաջին ատենամարզանքներէն մէկուն Ան-ը կազմակերպեց բացօթեայ աշխուժ խաղեր, որպէսզի աշակերտներուն միջեւ կապը սերտանայ:



7) ՈՒՍՈՒՑՉԱՑ ՏՕՆ

Ուսուցչաց տօնին առթիվ ԱԽ-ը աշակերտներին հաւաքուած կարճ երախտագիտական խօսքերով պատրաստեց poster մը: Նաեւ կազմակերպեց հիւրասիրութիւն՝ յայտնելու համար իրենց շնորհակալութիւնը ուսուցիչներուն այս դժուար պայմաններուն մէջ անոնց զոհողութեան համար:

8) VALENTINE-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

ԱԽ-ը պատրաստեց պզտիկ սրտիկներ, որոնց վրայ գրուած էր “Reminder from the student council of AEC to love each other not only on Valentine’s Day”, որուն նպատակն էր յիշեցնել աշակերտներուն, որ իրարու հետ սիրով ըլլան եւ թէ իրենք սիրուած են: Ետքը, իւրաքանչիւր աշակերտ սրտիկին ետեւը գրեց note մը, որ պատահաբար բաժնուեցաւ աշակերտներու, ստեղծելով սիրալիր մթնոլորտ մը:

9) ԲՆՈՒԹԵԱՆ ԲԱՐԵԿԱՍ

ԱԽ-ը տարուան ընթացքին հաւաքեց շիշեր: ԱԽ-ի ներկայացուցիչները պատասխանատու էին դասարաններու մէջ Կենսոլորտին ակումբին տեղադրած recycling աղբամաններուն ճիշդ գործածութեան: ԱԽ-ն, նկատելով նաեւ թէ դասարաններու լոյսերը յաճախ վառած կը մնան, պատկերագարդ յիշեցումներ դրաւ լոյսի կոճակներուն քով՝ իբրեւ լոյսը մարելու յիշեցում:

10) ՍԵՐՏԱՐԱՆ

Տեսնելով կարգ մը աշակերտներու պետքը դասերու մէջ յաւելեալ օգնութեան, օգնութեան, ԱԽ-ը կազմակերպեց սերտարանի դրութիւն, ուր մեծ դասարաններու աշակերտներ կ’օգնէին փոքրերու: 6 աշակերտ օգտուեցաւ այս ծրագիրէն:

13) ՊԱՍՔԵԹՊՈՒՆ ՄՐՅԱՇԱՐՔ

Նպատակն էր քաջալերել աշակերտները եւ նորութիւն բերել: Բաւական ճոխ ու յաջող անցաւ, որուն բոլոր դասարաններէ մասնակցեցան մեծ ու պզտիկ միասին՝ զարգացնելով մարզական ոգին:

14) ENGLISH WRITING COMPETITION

Օրիորդ Շադիկին օժանդակութեամբ կազմակերպուեցաւ անգլերէն շարադրութեան մրցանք, յատկապէս զարկ տալով անոնց երեւակայութեան:

15) ԱՆԱՆՈՒՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Բաւական լաւ գաղափար մըն էր, երբ դպրոցին վերջին ամիսը տարբեր աշակերտներու միջեւ նամակներու անանուն փոխանակում եղաւ եւ իրար հետ բարեկամացան ու խօսեցան:

16) ԻՐԱՅԱՏՈՒԿ ՀԱԳՈՒԱԾԵԻ ՕՐ

Տեսնելով պարզապէս առանց տարազի գալու աշակերտներուն ուրախութիւնը, կազմակերպեցինք երկրորդ special dress up day մը:

17) ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Աշակերտները ծանօթացան հայկական աւանդութիւններէն մէկուն, որ բաւական յաջող էր:

18) ԿԱՅՔ

ԱԽ-ի յատուկ կայք մը պատրաստուեցաւ, ուր աշակերտներ կրնային անանուն հարցումներ եւ առաջարկներ կամ գանգատներ յղել: Կայքը պիտի ըլլայ շարունակական. այնտեղ ընդգրկուած են նախորդ ԱԽ-ներու իրագործումները եւ պիտի ներառէ յաջորդները:

ԱԽ-ի շնորհիւ բաւական զօրաւոր վստահութիւն մը ստեղծուեցաւ աշակերտներուն մէջ ԱԽ-ին հանդէպ: Խորհուրդը փորձեց ինքնուրոյնաբար լուծել իրեն ներկայացուած կարգ մը հարցերը, ինչպէս bullying-ի պարագայ մը եւ այլն: Այլ հարցեր հետապնդուեցան ու լուծուեցան ուսուցիչներու եւ տնօրէնութեան հաղորդակցութեամբ: ԱԽ-ի առաջարկութեամբ այս տարի սկսան SAT-ի եւ համակարգիչի դասընթացքներ: Մեր առաջարկով այս տարուան talent show-ն ներառեց նաեւ այլ տաղանդներ՝ երաժշտականէն բացի:

Հոգաբարձության որոշումով 2021-22 տարեշրջանի նշանաբան ընտրուեցաւ «ՎԵՐԱԿԱՆՔՆԵՆՔ ՀԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ ԵՒ ԿԱՌՈՒՑՆԵՔ ՆՈՐԵՐ» խօսքը: Երեք շուրջօրեայ ձեռնարկներով աշակերտներ ընկարկեցին եւ վերարժեւորեցին հետեւեալ նկարերը.

ԿԱՄՈՒՐՋ ԴԵՂԻ ՄԱՅՐԵՆՆԻՍ

ԿԱՄՈՒՐՋ ԴԵՂԻ ԱՍՏՈՒԱԾ

**ԿԱՄՈՒՐՋ ԴԵՂԻ ԱՐՄԱՏՆԵՐ
ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ**







Մարտի երրորդ շաբաթը սկսաւ «առանց դասի» զոյգ օրերով, բայց յատկանշուեցաւ դաստիարակչական կարեւոր գործունեութիւններով:

14 Մարտ 2022-ին Նախակրթարանի աշակերտները ունեցան իրենց գործունեութիւնը տարբեր պահերու: Աշակերտները լսեցին «Ո՞վ եմ ես եւ ի՞նչ յատկութիւններ ունիմ, որոնցմով շրջանակիս կրնամ օգտակար ըլլալ» ներկայացումը: Անոնք ինքզինքնին ներկայացուցին եւ յայտնեցին իրենց փափաքները, որմէ ետք խմբային աշխատանքներ ունեցան: Նկատի առնելով, որ մեր շրջանակին մէջ նաեւ կան մարդիկ, որոնց սիրայօժար ծառայութիւնը կ'օգնէ դպրոցիս հեզասահ ընթացքին, աշակերտները շնորհակալական բացիկներ պատրաստեցին եւ նուիրեցին անձնակազմին: Աշակերտները նաեւ իրենց դասարանը զարդարեցին եւ poster-ներ շինեցի «բարեկամութեան» մասին: Ուրախ մթնոլորտի մէջ անոնք նաեւ միասին picnic ըրին, խաղցան եւ պատմութիւններ լսեցին:

Յաջորդ օրը՝ 15 Մարտ 2022-ին, երկրորդականի աշակերտները ունեցան իրենց «Գործունեութեան Օր»-ը: Միասնաբար Նախաճաշելէ ետք, անոնք հաւաքուեցան եւ զրուցեցին ինքնավստահութեան, ինքնասիրութեան եւ ինքնագնահատութեան մասին. այս պահը առաջնորդեց տիկին Հռութ Եունիսէսը: Պատուելի Ժիրայր Ղազարեան շատ լաւ ձեւով ներկայացուց «Աշակերտ-ուսուցիչ յարաբերութիւն» նիւթը, արծարծուեցան երկուստեք առաջ բերուած իրավիճակներ եւ միասնաբար փորձ եղաւ լուծումներ գտնելու: Տոնական մթնոլորտ տիրեց, երբ աշակերտները իրենց ընկերներուն տարեդարձը նշեցին, դասարանները զարդարեցին եւ իրենց կարգին պատրաստեցին շնորհակալական բացիկներ, որոնք նուիրեցին տնօրէններուն, հովիւին, դպրոցի ու եկեղեցւոյ գրասենեակի պաշտօնեաներուն եւ հոգաբարձութեան՝ առ ի գնահատանք դպրոցին եւ աշակերտութեան համար անոնց ջանքերուն:

Երկու օրերու գործունեութիւնները պատրաստած էր ու վարեց տիկին Հռութ Եունիսէս, գործակցութեամբ աշակերտներու եւ ուսուցիչներու:



Պատկաճելու ժառիրի սահմանափակումներուն պատճառով, Ծնողաց մարմինի գործունեությունները սահմանափակուեցան 2020-2021 տարեշրջանին: Սակայն, 2021-22-ին, Աստուծոյ կամքով եւ առաջնորդութեամբ, ՀԱԳ-ի Ծնողաց մարմինը կարողացաւ դպրոցի տնօրէնութեան հետ գործակցելով յաջողցնել կարգ մը ծրագիրներ:

Տարեշրջանի սկիզբը դպրոցիս տնօրէն՝ դոկտ. Արմէն Իւրնէշլեանի առաջնորդութեամբ, Ծնողաց նորընտիր մարմինը ունեցաւ իր առաջին ժողովը, որուն ընթացքին ընտրեցին նոր դիւանը:

ՀԱԳ-ի Ծնողաց Մարմինի անդամներն են՝

*Արեւնապետ՝ տրիկին Վերա Հապտապ
Փոխապետնապետ՝ տրիկին Ալին Պողոսեան
Գանձապահ՝ տրիկին Եղիկ Թորոսեան
Հաշուապահ՝ տրիկին Սիլվա Տաքեսեան
Արեւնադպիր՝ տրիկին Հուրի Ղազարեան*

2021-2022 տարեշրջանի ՀԱԳ-ի Ծնողաց մարմինի իրականացուցած ծրագիրներն են.

ՈՒՍՈՒՑԱՅ ՏՕՆ

Մարտ 8-ին ուսուցիչ/ուսիկները հաւաքուեցան եկեղեցոյ դահլիճը որպէսզի յանձնախումբը քաջալերէ ու գնահատէ դպրոցի ուսուցչական կազմը: Հաւաքին ընթացքին ուսուցիչներ կարկանդակ հատեցին եւ ստացան յիշատակի նուէրներ՝ պատրաստուած Ծնողաց մարմինի անդամներուն կողմէ:



Տօնակատարութեան ընթացքին Ծնողաց մարմինը իր կարգին հայերէն եւ արաբերէն լեզուներով ուսուցիչ/ուսիկներուն փոխանցեց իր սրտի խօսքը:

ՔԱՂՏՐԱԵՆԻՔԻ ՀԻՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Յարութեան տօնին առթիւ դպրոցի աշակերտներուն բաժնուեցան զատկուայ կարկանդակներ եւ տուրմեր՝ Լոս Անճելըսի Հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութեան կողմէ:

ՆԱԽԱՃԱՇ ՈՒ ԴԱՍԱԽՍՈՒԹԻՒՆ

Մայիս 12-ին՝ Մայրերու օրուայ առթիւ, Ծնողաց մարմինը նախաճաշ ու բանախօսութիւն մը կազմակերպեց:



Խորհրդական անդամներ՝ տրիկնայք Կարինէ Չոլագեան, Յասմիկ Աւետեան, Յասմիկ Գոճայեան, Սիլվա Գրիգորեան, Վանեսա Ֆրանսիս, Սաթենիկ Աբրահամեան եւ տեսարք Մինաս Սարգիսեան, Մարտիկ Շէքերճեան եւ Վաչէ Կոբարեան:



Մանկապարտեզի եւ նախակրթարանի աշակերտները բաժին բերին ձեռնարկին՝ երգերով եւ արտասանութիւններով: Օրուան դասախօսուիին էր տրիկին Շաղիկ Խուտավերտեանը, որուն դասախօսութեան նիւթն էր՝ «Ինչպէս դիմագրաւել արդի տագնապները», որուն ընթացքին դասախօսուիին տագնապալի իրավիճակներէն ձեռքազատուելու համար գործնական քայլեր թելադրեց: Լոս Անճելըսի Հայ մայրերու եւ ուսուցչուհիներու միութիւնը հովանաւորեց ձեռնարկը, ինչպէս նաեւ նախկին աշակերտ տիար Արսէն Գարակէօզեան բոլոր ներկաներուն նուիրեց բոյս մը զետեղուած բաժակի մը մէջ:

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍԻ ՀԻՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

8 Յուլիսին Ծնողացը հիւրասիրութեամբ մը պատուեց այս տարուան շրջանաւարտները եւ անոնց ծնողներն ու ուսուցիչները:

Աստուծոյ փառք կու տանք այս գեղեցիկ առիթներուն համար եւ կ'աղօթենք, որ Տէրը առատապէս օրհնէ բոլոր անդամները, որոնք որեւէ ջանք չխնայեցին ծրագիրներու յաջողութեան:

Օգոստոս 4-ի ՆԱԼԱԿԱՆԳԻՍՏԻ պայթյունի ՆԻՐՔԱԿԱՆ լուրջ վնասներ կրեց ՀԱԳ-ի դպրոցաշենքը եւ Ա. ԵԿԵՂԵՑԻՆ: Բարեբախտաբար ՀԱԳ-ի մեծ ընտանիքին մարդկային վնասները սահմանափակուեցան մանր վիրաւորումներով եւ ՆԻՐՔԱԿԱՆ վնասներով:



ԼՍԱՏԵՍՏՐԱԿԱՆ ՍԵՆԵԱԿ



ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆ



Հնորիւ բարերարներու եւ 1995-ի շրջանաւարտ ճարտարագէտ Եղիկ Թորոսեանի բժախնդիր եւ սիրայօժար աշխատանքին, մէկ ամսուան մէջ դպրոցին վնասները կարելի եղաւ վերանորոգել:

Կը ներկայացնենք կարգ մը տեսարաններ:



ԶԱՆԻՑ



Ա. ԴԱՍՏԱՐԱՆ





ՄԱՆԿԱԴԱՐԱՐԵԸ - ԾԱՌԿ ԴԱՍԱՐԱՆ



10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ



ՄԻՋԱՆՔ

ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ 2020-2021 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Արտառոց տարի մը եղաւ 2020-21-ը, լի անակնկալներով, շահեկան եւ տհաճ նորություններով: Դասաւանդութեանց 4/5-րդը եղաւ առցանց դրութեամբ, անոր բոլոր օգտակարութիւններով եւ անպատեհութիւններով: Պսակաձեւ ժաիրը, տնտեսական ահաւոր սղաճը, քաղաքական եւ ապահովական անկայունութիւնները օրուան նիւթն էին ուսուցիչին եւ աշակերտին, որոնք ինչ խօսք, բաւական հեղք թողուցին ընդհանուր տրամադրութեան վրայ: Նաւահանգիստի 4 Օգոստոս 2021-ի աղէտին պայթիւնը երկար արձագանգեց բոլորիս հոգիներէն ներս, ազդելով նաեւ աշակերտներու հոգեվիճակին վրայ: Բարեբախտաբար դասն ու պարտականութիւնները եւ ըստ կարելոյն կազմակերպուած գործունէութիւնները ամփոփէ դեր կատարեցին: Մանաւանդ պայթումին յառաջացուցած վնասներուն արագ վերականգնումը՝ աշակերտները դպրոց չվերադարձած, վերընձիւղումի եւ վերապրումի յոյսի նշաններ հանդիսացան: Փանք Աստուծոյ, որ ոչ համալարակէն, ոչ ալ պայթումէն ուղղակի մարդկային զոհեր չունեցանք:

Փանք Ամենակալին, որ դպրոցի պատասխանատուներուն աջալըջութեան եւ ուսուցիչներու նուիրումին շնորհիւ ու բարերարներու եւ բարեկամներու աջակցութեամբ կրցանք բարեյաջող աւարտին հասցնել տարին, մեր աչքերը սեւեռած դպրոցի հարիւրամեակին:

ԴՈԿՏ. ԱՐՄԷՆ ԻՐԻՆԵՇԼԵԱՆ

Ա. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

2020 Օգոստոս 4-ի պայթումը ցնցեց եւ հոգիները, եւ շէնքերը: Փլուզեց թէ երազներ, թէ կառոյցներ: Մինչ հոգիներու, յոյսերու եւ երազներու բուժումը կը կարօտի երկարատեւ տարիներու ու խնամքի, շէնքերու պատճառուած վնասները արագօրէն սկսան դարմանուիլ: Այս առումով հայ աւետ. համայնքը, իր աշխարհատարած կապերով, կրցաւ արագօրէն վերականգնել իր կառոյցներուն հասցուած վնասները:

Շնորհիւ ՄԱՀԱԵ միութեան ջանքերուն, ԱՀԱ ընկերակցութեան, Bebe w'shebbek ու Nusaned կազմակերպութեանց եւ անհատ բարերարներու օժանդակութեան հաւաքուեցաւ մօտաւորապէս 35 հազար ամ. տոլար, որով կարելի եղաւ ոչ միայն նորոգել պայթումին պատճառած քանդումները, այլեւ հիմնովին փոխել երկաթեայ պատուհանները, բարեփոխել երկրորդ յարկը՝ զայն ամբողջովին յատկացնելով մանկապարտէզին:

Բ. ՎԵՐԱՄՈՒՏ

2020-2021 տարեշրջանը սկսաւ 28 Սեպտեմբեր 2020-ին եւ պաշտօնապէս աւարտեցաւ 23 Յունիս 2021-ին: Տարեշրջանին ընթացքին ունեցանք 141 - 157 դասաւանդութեան օրեր (ըստ դասարանի), միջին հաշուով 81%-ը առցանց, 19%-ը առկայ ձեւաչափով: Վարչական գրասենեակները աշխատեցան բնականոն, բացի պարտադիր փակումի օրերէն:

Գ. ԱՇԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻՒ

Աշակերտութեան թիւը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Բաժին	Աշակերտութիւն Դասարաններ	
Մանկապարտէզ	18	3
Նախակրթարան	53	6
Միջնակարգ	22	3
Երկրորդական	23	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	116	16

Ունեցանք 16 ոչ-հայ աշակերտներ, հետեւեալ դասարաններուն մէջ. Մանկապարտէզ (4 հոգի), Նախակրթարան (6 հոգի), Երկրորդական (6 հոգի): Ասոնցմէ 13-ը կանոնաւորաբար կը հետեւին հայերէնաւանդ դասերուն. միւս երեքին խանգարեց առցանց դասաւանդութիւնը եւ դպրոցէն երկարատեւ բացակայութիւնը:

Տարեշրջանի ընթացքին վեց աշակերտներ ամբողջութեամբ առցանց հետեւեցան դասաւանդութիւններուն, քանի որ կը գտնուէին Հայաստան եւ Ուքրանիա:

Աշակերտութեան աշխարհագրական բաժանումը ունէր հետեւեալ պատկերը.

Շրջան	Թիւ	Համ.
Պէլյուրթ	29	25%
(վարչական կեդրոն եւ արուարձաններ)		
Պուրճ Համուտ	25	22%
Սին Էլ Ֆիլ, Տքուանէ, Ռաուտա	5	4%
Տորա, Հանքաշ, Ամանոս, Պաուշիէ, Ֆանար	24	21%
Ժտէյտէ, Զալքա, Անթիլիաս, Պալիմ, Սգիէր, Ռապուէ	19	16%
Տպայլէ, Նաքքաշ	2	2%
Պրումմանա, Մանսուրիէ, Այն Սաատէ	4	3%

Այն էլ Ռմմանէ	2	2%
Լիբանանէն դուրս (<i>wangwag</i>)	6	5%

Դ. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹԻՒՆ

Դպրոցի անձնակազմի միջին տարիքը 49-ն է. միջին ընդհ. փորձառությունը՝ 23 տարի: Անձնակազմի 75%-ը կը պատկանի իգական սեռին, 25%-ը՝ արական:

Վարչական պաշտօնէություն	4
Դռնապան, տնտես, մաքրող	5
Վարորդ	7
Մնայուն ուսուցիչներ	16
Այցելու ուսուցիչներ	12
ԸՆԴՀԱՆՈՒՐ	44

Ազգություն

Հայ ուսուցիչներ/պաշտօնեաներ	28
Արաբ ուսուցիչներ/պաշտօնեաներ	9

Ուսց./պաշտ. ակադ. աստիճաններ

PhD 2 MA, MS, Maitrise	6
BA, BS, License	18
Մանկավարժական որակաւորում	3
Այլ	3

Ուսց. փորձառություն ըստ տարիների

	ՀԱԳ-էն ներս	Ընդհ.
-5	7	0
5 – 10 տարի	6	5
11 – 15 տարի	7	2
16 – 20 տարի	3	6
21 – 25 տարի	4	5
26 – 30 տարի	3	6
31 – 35 տարի	1	6
41 – 45 տարի	0	1
60+	1	1

Տարին արտասովոր ըլլալով ուսուցչական կազմի ժողովները եղան ըստ կարիքի, փոքր խումբերով, առաւելաբար մասնագիտական քննարկումներու համար: Առաջին անգամ ըլլալով որդեգրուեցաւ եւ քանիցս կիրականացաւ հեռավար ժողովներու դրութիւնը «Զում» առցանց կապի միջոցով:

Ե. ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի անտարանական դիմագիծին եւ քրիստոնէական առաքելութեան հաւատարիմ՝ ըստ կարելոյն ունեցանք առաւօտեան եւ կիրակնօրեայ պաշտամունքներ եւ հոգեւոր գործունէութիւն, որոնք սակայն առողջապահական եւ ապահովական պատճառներով սահմանափակուեցան:

Զ. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակադեմական

Լիբանանի կրթութեան նախարարը ջնջեց արեւելի պետական քննութիւնները, իսկ պաքալորեայի բոլոր ուսանողները յաջողեցան 10-էն 8-ն «լաւ» կամ «շատ լաւ» յիշատակութեամբ:

ՀԲԸՄ-ի Հայկական համացանցային Համալսարանի (AVC) գործակցութեամբ շարունակուեցաւ Հայ երաժշտութեան պատմութեան դասը, եւ հաստատուեցաւ Հայոց պատմութեան առցանց դասաւանդութիւն:

Գործնական պատճառներով կրթական տարուան բաժանումը փոխուեցաւ եռամսեայ դրութեան, փոխան՝ քառորդի: Հետեւելով առողջապահական սահմանափակումներուն ջնջուեցան Բ. եռամսեայի քննութիւնները եւ կրճատուեցան քննութեան դասերը:

Դադրեցաւ գրադարանի գործունէութիւնը, ինչպէս նաեւ սահմանափակուեցան գիտաշխատանոցի գործածութիւնը: Ամբողջ տարին առկախուեցան երգ-երաժշտութեան, գեղարուեստի ու ձեռային աշխատանքի եւ մարմնամարզի դասերը:

Արտադասարանային եւ արտադպրոցական

Արտադպրոցական եւ արտադասարանային ուսկումբային գործունէութիւնները դադրեցան առողջապահական պատճառներով եւ մեկուսացումի օրէնքին գործադրութեամբ:

Աշակերտական խորհուրդ

Անցեալ տարի ընտրուած Աշակերտական խորհուրդի իրաւասութիւնները տարիով մը երկարաձգուեցան: Խորհուրդը կրցաւ պայմաններուն ներածին չափով օգտակար ըլլալով աշակերտներուն, յատկապէս առցանց դասաւանդութիւններու ընթացքին ծագած կարգ մը խնդիրներ տնօրէնութեան ուշադրութեան յանձնելով:

Առողջապահական

Ներդպրոցական առողջապահական քննութիւններ տեղի չունեցան: Պսակածեւ ժահրի տարածումը կանխարգիլող խիստ միջոցառումներ ձեռք առնուեցան, ինչպէս տեւական հականեխում, դիմակի մշտական գործածութիւն, հաւաքներու սահմանափակում: 1959-ի շրջանաւարտ տիկին Եւփիմէ Խօշաֆեան-Պալճեանի զաւակներուն նուիրատութեամբ, բոլոր աշակերտական գրասեղանները օժտուեցան պաշտպանիչ վահանակներով:

Տարեշրջանի տեւողութեան (2020 Հոկտ. – 2021 Յունիս) ունեցանք Պսակածեւ ժահրի վարակման 22 պարագայ՝ 13 աշակերտ (11.21%) եւ 9 անձնակազմ (20.5%), բարեբախտաբար առանց զոհերու:

Է. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ յանձնախումբի, Ծնողաց մարմինի եւ Տիկնանց ընկերային յանձնախումբի

գործունեությունները խիստ սահմանափակուեցան առողջապահական պայմաններում եւ սահմանափակումներուն, ինչպէս նաեւ նիւթական տազնապին պատճառով:

Ը. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ տարեշրջանին առցանց լոյս տեսան «Լրատու»-ի երեք թիւեր (ԻԲ. տարի թիւ 1, 2, 3): «Սիւփան» տարեգիրքը (2019 եւ 2020 միացեալ համար) նոյնպէս լոյս տեսաւ առցանց: Լոյս չտեսան աշակերտական հրատարակությունները:

Դպրոցի գործունեությունները մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի (www.facebook.com/aecollege.lb), ինսթակրամի (<https://www.instagram.com/aecollege/>) եւ կայքին (<http://www.aecbeirut.edu.lb/>) միջոցաւ: Դպրոցի Ֆեյսպուքի էջին վրայ տարեշրջանին եղած է 102 տեղադրում, որոնք հասանելի եղած են ընդհանուր 124,646 հոգիի: Ամենամեծ լսարանը ունեցած է նախկին աշակերտ բարերար Նուպար Աֆէեանի Լիբանանի նախագահին կողմէ շքադրումը՝ 25,393 դիտում (5/02/21) եւ տնօրէնին կոչը՝ արցախեան պատերազմի անփառունակ աւարտէն ետք՝ 11,600 դիտում (12/11/20):

Թ. ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

Ուրբաթ, Յունիս 25-ին իրենց վկայականները ստացան 2020-21-ի շրջանաւարտներն ու 2019-20-ի եւ 2020-21-ի մանկապարտէզի ու նախակրթարանի ընթացաւարտները:

Ժ. ԿՐԹԱՆՊԱՍՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամսականը, բացի աշակերտներէն գանձուած գումարներէն, առաւելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատուութիւններով:

Երկրին տնտեսական ահաւոր տազնապին ու աննախադէպ սղաճին պատճառով՝ իբրեւ բացառիկ կարգադրութիւն, ՄԱՀԱԵ միութեան կոչին ընդառաջելով աշակերտական ընդհանուր գանձումներուն տրամադրուեցաւ մօտաւորապէս **84% զեղչ**, ո-

րով դպրոցին ամսականին միայն **6 առ հարիւր** գոյացաւ աշակերտական գանձումներէ: Մնացեալը նուիրատուութիւններ եւ յատկացումներ են:

Դպրոցին իրենց տարեկան յատկացումները շարունակեցին տրամադրել Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Wider Church Ministry-ն, Ստեփան Փիլիպոսեան հիմնադրամը: Յատուկ յատկացումներ կատարեցին Հայաստան համահայկական հիմնադրամը, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը, Արցախի պետութիւնը, տիարք Լեւոն, Պետրոս եւ Նուպար Աֆէեաններ եւ տիար Ալպետ Պեգճեան: Իր տարեկան յատկացումին զուգընթաց, տիար Ռաֆֆի Մանուկեան բացառիկ նուիրատուութիւն կատարեց դպրոցին:

Դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ տարեկան յատկացումները: ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ Աւետ. Ա. Եկեղեցի), նախկին աշակերտ, բարերար տիար Ռաֆֆի Մանուկեանի յատկացում, նախկին աշակերտ բարերար Հրաչ Սիսեռեանի յատկացում ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի, շրջանաւարտ տղոք. Նազարէթ Տարաքճեան, ՀԲԸՄ 2. Մարդեան մրցանակ, նախկին աշակերտ տիար Սարգիս Սիմիրեան, Բիւզանդ եւ Սարգիս Հասըրճեան հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Մարդեան Կրթական Հիմնադրամ, Կարապետ Զոլագեան, Եղիսաբէթ Զանճիկեան, Ասատուր Կիւլեսերեան, Մարի Կէօքլէօգեան, Դանիէլ Շնորհոքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, տղոք. Բաբգէն Մկրտիչեան, Անահիտ Կիւլեսերեան, Մարիամ Քաթմերեան, Էօթէն եւ Նազելի Էքմէքճի, տղոք. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտէ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Մանուկեան, Պատրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան, Աւետիս եւ Նորա Մենեշեան հիմնադրամները եւ տղոք. Զործ Էքմէքճի առողջապահական ֆոնտը: ԱՄՆ Արեւմտ. ափի շրջանաւարտից միութեան մէջ հաստատուած են Ալպեր եւ Թէրի Պեգճեան եւ Տիգրան Ապաճեան հիմնադրամները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր բարերարներուն, ի մասնաւորի տեարք Ռաֆֆի Մանուկեանին, Աֆէեան եղբայրներուն, Հրաչ Սիսեռեանին, տղոք. Նազարէթ Տարաքճեանին, Ալպետ Պեգճեանին ինչպէս նաեւ Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութեան, Lebanese Ladies Cultural Society-ին, ու այն բոլոր մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք տարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան դպրոցի աշխատանքներուն, նպաստելով անոր հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին. Յատուկ շնորհակալութիւն Հայկազեան համալսարանին, Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ խնամակալութեան, ՀԱԳ-ի հոգաբարձութեան, պատուակալ տնօրէնին, օժանդակ մարմիններուն, գործակից ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն, Հայ աւետ. կրթական խորհուրդին եւ անոր գործակալին, Հայ աւետ. հրատարակչական գրասենեակին:

ՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃԻ 2021-2022 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Հայ աւետարանական գոլէճի 99-րդ տարին կը փակենք ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր մեր երախտագիտութիւնը ուղղելով Ամենակալին, որ կատարեալ անորոշութեան մէջ սկսած տարին Իր շնորհիւ աւարտեցաւ բարեյաջող՝ համեմատաբար բնականոն ընթացքէ մը ետք: Վերականգնուեցան մարզանքի, երաժշտութեան եւ գեղարուեստի պահերը, նոր թափով ու եռանդով վերսկսան արտադասարանային գործունէութիւնները: Տարեվերջին սկսան դպրոցաշէնքի արտաքին ճակատի նորոգութեան եւ բարեզարդման աշխատանքները:

ԴՈՎՏ. ԱՐՄԷՆ ԻՐԻՆԵՇԼԵԱՆ

Ա. ՎԵՐԱՄՈՒՏ

2021-2022 տարեշրջանը սկսաւ 27 Սեպտեմբեր 2021-ին եւ պաշտօնապէս աւարտեցաւ 24 Յունիս 2022-ին: Տարեշրջանին ընթացքին ունեցանք 146 դասաւանդութեան օրեր՝ ֆիզիքական ներկայութեամբ (բացի Օմիքրոն վարակի տարածման շրջանի (Յունուար 10 – 14) առցանց դասերէն): 50 օր դպրոցը փակուեցաւ արձակուրդի, քննութեանց միջեւ դադարի եւ այլ պատճառներով:

Բ. ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻՒ

Աշակերտութեան թիւը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

Բաժին	Աշակերտութիւն Դասարաններ	
Մանկապարտէզ	17	3
Նախակրթարան	51	6
Միջնակարգ	25	3
Երկրորդական	16	3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	109	14

Ունեցանք 19 ոչ-հայ աշակերտներ, հետեւեալ դասարաններուն մէջ. Մանկապարտէզ (7 հոգի), Նախակրթարան (6 հոգի), Երկրորդական (6 հոգի): Ասոնցմէ 14-ը կանոնաւորաբար կը հետեւին հայերէնաւանդ դասերուն:

Տարեշրջանի ընթացքին մէկ աշակերտուիի ամբողջութեամբ առցանց հետեւեցաւ դասաւանդութիւններուն՝ Արաբ. Միացեալ Էմիրութիւններէն:

Գ. ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՕՆԵՐՈՒԹԻՒՆ

Դպրոցի անձնակազմի միջին տարիքը 49-ն է. միջին ընդհ. փորձառութիւնը՝ 23 տարի: Անձնակազմի 75%-ը կը պատկանի իգական սեռին, 25%-ը՝ արական:

Բնոյթ

	թիւ
Վարչական պաշտօնէութիւն	4
Դռնապան, տնտես, մաքրող	4
Վարորդ	5
Մնայուն ուսուցիչներ	15
Այցելու ուսուցիչներ	15
ԸՆԴՀԱՆՈՒՐ	43

Ազգութիւն

Հայ ուսուցիչներ/պաշտօնեաներ	25
Արաբ ուսուցիչներ	9

Ուսուցչական կազմի ժողովները եղան ըստ կարիքի, փոքր խումբերով, առաւելաբար մասնագիտական քննարկումներու համար: Կուտակումներէ խուսափելու համար ծնողական ընդհանուր ժողովներ չգումարուեցան: Ուսուցչաց խորհուրդը առաջին անգամ ըլլալով ունեցաւ ամսական ընդհանուր ժողովներ (թիւով՝ 6), որոնց ընթացքին առնուեցան կրթական կեանքի ու դրուածքի առնչուող որոշումներ:

Դ. ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Գոլէճի աւետարանական դիմագիծին եւ քրիստոնէական առաքելութեան հաւատարիմ՝ վերսկսան առաւօտեան պաշտամունքները շաբաթական երկուփական օր պարբերականութեամբ: Երկրորդականի պաշտամունքները ընդհանրապէս վարեց պատուելի Ժիրայր Ղազարեան: Ունեցանք նաեւ հիւր պատգամաբերներ: Վերսկսան նաեւ կիրակնօրեայ աշակերտական պաշտամունքները, որոնց ներկայ եղան երկրորդական բաժնի հայ աշակերտները: Ասոնց մէջ յատուկ էին վերամուտի եւ շրջանաւարտից գոհաբանական պաշտամունքները: Հոգեւոր աճման համար շարունակուեցան Սուրբ գիրքի դասաւանդութիւնները. արժանի է նշել թէ միջնակարգ-երկրորդական բաժնի աշակերտ-

ներուն մեծ մասը (88%) մասնակցեցաւ ՀԱԱ եկեղեցւոյ Պատանեաց շարժումին (ներառեալ ոչ-քրիստոնեայ արաբ աշակերտներ):

Ե. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ակադեմական

2022 Յունիս-Յուլիսին 9-րդ եւ 12-րդ դասարաններու աշակերտները մասնակցեցան պրէզմէի եւ պաքալորեայի պետական քննութիւններուն, արձանագրելով 100 առ 100 պատուաբեր յաջողութիւն: Պաքալորեայի բոլոր 4 ուսանողները յաջողեցան յիշատակութեամբ՝ 3 «լա» եւ 1 «շատ լա», իսկ պրէզմէի 6 աշակերտներէն 2 հոգի «շատ լա» եւ 1 հոգի «լա»:

Արտադասարանային եւ արտադպրոցական

Վերսկսան գործել Սուրբ գիրքի (պատասխանատու՝ տիկին Հոութ Եունիսէս) եւ Հայկական (պատասխանատու՝ տիկին Անի Պիլալեան) ակումբները, որոնք անջատաբար եւ միասնաբար ունեցան զանազան գործունէութիւններ: Յատուկ նշելի են Սուրբ գիրքի ակումբի «Կամուրջ դէպի շրջապատ» եւ Հայկական ակումբի «Կամուրջ դէպի հայկական արմատներ եւ մշակոյթ» շուրջօրեայ գործունէութիւնները, ինչպէս նաեւ ուխտագնացութիւնը դէպի Լիբանանի մէջ գտնուող Մեծ եղեռնի յուշակոթողները:

Կարգ մը աշակերտներ մասնակցեցան նկարչական, շարադրական եւ ասմունքի մրցանքներու: Մրցանակներու տիրացան 9-րդ դասարանի աշակերտուհի Սէրլի-Ռոզի Շահինեան (շարադրական) եւ 11-րդ դասարանի աշակերտ Հրակ Մամիկոնեան (ասմունքի):

Խմբային գործունէութիւններու արգելքի վերացումէն ետք վերսկսան նաեւ նախակրթարանի եւ երկրորդականի ատենամարզանքները (պատասխանատուներ տիկնայք Անի Պիլալեան եւ Զարմինէ Ասմինեան): Կազմակերպուեցան ընկերային, մշակութային, դաստիարակչական բնոյթի գործունէութիւններ, նշուեցան զանազան տօնական առիթներ, ինչպէս նաեւ կազմակերպուեցան բազմաբնոյթ խաղեր եւ մրցումներ:

Աշակերտական խորհուրդ

Խանդավառ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ Աշակերտական խորհուրդի ընտրութիւնը, ուր վարչապետ ընտրուեցաւ Էլվիրա Զէյթունցեան: Անոնք իրենց ջանքերով կահաւորեցին «Աշակերտական անկիւն»-ը (student lounge), կազմակերպեցին գործունէութիւններ եւ տնօրէնութեան հետ համախորհուրդ իրականացուցին որոշ ծրագիրներ: Հարկ է նշել, որ Աշակերտական խորհուրդի ամանդոյթը ար-

դէն իսկ հիմնաւորուեցաւ դպրոցին մէջ եւ իր դրական ներգործութիւնը ունեցաւ յատկապէս միջաշակերտական յարաբերութիւններու մէջ:

Առողջապահական

Ներդպրոցական առողջապահական քննութիւններ տեղի չունեցան, քանի որ Հաուըրտ Գարակէօզեան հիմնարկութիւնը այս տարի չնախաձեռնեց նման աշխատանք: Բարեբախտաբար չունեցանք լուրջ արկածներ եւ առողջապահական այլ պարագաներ, բացի Պսակաձեւ Ժահրի վարակումի 24 պարագաներէ՝ 14 աշակերտ (11.21%) եւ 10 անձնակազմ (20.5%), բարեբախտաբար առանց լուրջ առողջական հետեւանքներու:

2. ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Տիկնանց օժանդակ յանձնախումբը իր գործունէութիւնը շարունակեց Ծնողաց մարմինին հետ համատեղ: **Տիկնանց ընկերային յանձնախումբը** պայմաններուն բերումով չունեցաւ իր սովորական շրջապատայնութիւնը. տիկնանքը 20 Մարտին դպրոցի անունով ձեռային աշխատանքներու վաճառք մը կազմակերպեցին Պուրճ Համուտի «Մեր շուկան» տօնավաճառի ծիրէն ներս:

Ծնողաց մարմինը այս տարի ունեցաւ իր նորընտիր վարչութիւնը (ատենապետուհի տիկ. Վերա Գարակէօզեան-Հատտատ): Տարուան ընթացքին, Տիկնանց օժանդակ յանձնախումբին հետ կամ առանձին, Ծնողաց մարմինը կազմակերպեց «Ուսուցչաց օր»-ուայ հիւրասիրութիւն, Ս. Զատկուայ նուէրներ եւ տարեվերջի նախաճաշ պատրաստեցին աշակերտներուն, 12 Մայիսին կազմակերպեցին նախաճաշ-դասախօսութիւն եւ պատրաստեցին Ամալվերջի հանդէսի հիւրասիրութիւնը, ինչպէս նաեւ տնօրէնութեան հետ համախորհուրդ երկու անգամ սննդեղէնի փաթեթներ կամ գնումի կտրօններ յատկացուեցան կարգ մը աշակերտներու: Վերոյիշեալ ծրագիրները, ինչպէս նաեւ աշակերտական կարգ մը հիւրասիրութիւնները իրականացան Լոս Անճելոսի հայ տիկնաներու եւ ուսուցիչներու միութեան նիւթական օժանդակութեամբ:

Ե. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ տարեշրջանին առցանց լոյս տեսան «Լրատու»-ի երեք թիւեր (ԻԳ. տարի թիւ 1, 2, 3): «Սիփան» տարեգիրքը (2021 եւ 2022 միացեալ համար) նոյնպէս լոյս տեսաւ առցանց: Լոյս չտեսան աշակերտական հրատարակութիւնները:

Դպրոցի գործունէութիւնները մեծ տարածումով լուսաբանուեցան առցանց՝ Ֆեյսպուքի (www.facebook.com/aecollege.lb), ինսթակրամի (<https://www.instagram.com/aecollege/>) եւ կայքին (<http://www.aecbeirut.edu.lb/>) միջոցաւ:

Ը. ՎԿԱՅԱՎԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ

17 Յունիսին, գեղեցիկ հանդեսի մը ընթացքին, Ծաղիկ դասարանէն վկայուեցան 3 աշակերտներ, իսկ Յուլիս 5-ին իրենց վկայականները ստացան 2021-22-ի 6 ընթացաւարտներ (6-րդ դասարան) եւ 4 շրջանաւարտներ (12-րդ դասարան): ՀԱԳ-ի շրջանաւարտներու ընդհանուր թիւը հասաւ 1625-ի: Նոյն օրը պատուոյ վկայագիրքեր ստացան վերջերան շրջանաւարտներ Միհրան Ղորղորեան եւ Գրիգոր Գրաճեան:

Թ. ԿՐԹԱՆՊԱՍՏ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Իբրեւ ոչ-շահութաբեր հաստատութիւն, ՀԱԳ-ի ամավարկը, բացի աշակերտներէն գանձուած գումարներէն, առաւելաբար կը գոյանայ հիմնադրամներու յատկացումներով եւ նուիրատութիւններով:

Երկրին տնտեսական ահաւոր տագնապին ու աննախադէպ սղաճին պատճառով՝ իբրեւ բացառիկ կարգադրութիւն, ՄԱՀԱԵ միութեան կոչին ընդառաջելով այս տարի եւս աշակերտներէն գանձուեցաւ միայն 750,000 լ.ո. կրթաթոշակ, աշակերտական ծախսերու գանձումները իջան նուազագոյնի, իսկ աշակերտական փոխադրավարձքի վրայ հաստատուեցաւ գրեթէ 50 առ հարիւր զեղչ, թեթեւցնելու համար վառելանիւթի սղութեան հետեւանքով մեծ համեմատութիւններու հասած փոխադրութեան ծախսերը: Այսպիսով դպրոցին ամավարկին միայն **6 առ հարիւրը** գոյացաւ աշակերտական գանձումներէ: Մնացեալը նուիրատութիւններ եւ յատկացումներ են:

Տնտեսական ահաւոր տագնապին ու սղաճին պատճառով, ուսուցիչներու ամսականները սարսափելի համեմատութիւններով արժեզրկուեցան: Առ այդ, բարերար Ռաֆֆի Մանուկեան 9 ամսուան համար իւրաքանչիւր ուսուցիչի ու պաշտօնեայի հաւասարապէս տրամադրեց 74 տոլար: Նոյնպէս Մեծի տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին կողմէ ուսուցչակազմին տրամադրուեցաւ 32 միլիոն լ.ո.

նուէր: Հոգաբարձութեան յատուկ կարգադրութեամբ կարելի եղաւ մարել ուսուցչակազմի յետնեալ պարտքերը: ՄԱՀԱԵՄ-ի միջոցաւ WCM եւ ACO հիմնադրամներէն ստացուած նուիրատութեամբ հնարաւոր դարձաւ բարձրացնել անձնակազմի փոխադրածախսի յատկացումը:

Դպրոցին իրենց տարեկան յատկացումները շարունակեցին տրամադրել Ամերիկայի հայ աւետարանչական ընկերակցութիւնը, Lebanese Ladies Cultural Society-ն, Ստեփան Փիլիպոսեան հիմնադրամը, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը, տիարք Ռաֆֆի Մանուկեանը (որ այս տարի աւելցուց իր տարեկան յատկացումը), Հրաչ Սիսեռեանը, Ալպետ Պեզճեանը, տորթ. Նազարէթ Տարաքճեանը եւ ուրիշներ: Շնորհակալութիւն բոլորին:

Դպրոցին զանազան կարիքներուն համար հաստատուած են հետեւեալ յատուկ հիմնադրամները կամ տարեկան յատկացումները: ՀԱԳ 80-ամեակի հիմնադրամ (Հայ Աւետ. Ա. Եկեղեցի), նախկին աշակերտ, բարերար տիար Ռաֆֆի Մանուկեանի յատկացում, նախկին աշակերտ բարերար Հրաչ Սիսեռեանի յատկացում ի յիշատակ իր ծնողաց՝ Գեղամ եւ Ալիս Սիսեռեանի, շրջանաւարտ տորթ. Նազարէթ Տարաքճեան, ՀԲԸՄ Զ. Մարութեան մրցանակ, նախկին աշակերտ տիար Սարգիս Սիմիթեան, Բիւզանդ եւ Սարգիս Հասըրճեան հիմնադրամ, Արա Պալեան կրթական հիմնադրամ, Զաւէն Մարութեան Կրթական Հիմնադրամ, Կարապետ Չոլագեան, Եղիսաբէթ Ծանճիկեան, Ասատուր Կիւլեսերեան, Մարի Կեօքկեօզեան, Դանիէլ Շնորհօքեան, Օլիվիա Հապիպ, Գրիգոր Պողարեան, Խաչեր Գալուստեան, տորթ. Բաբգէն Մկրտիչեան, Անահիտ Կիւլեսերեան, Մարիամ Քաթմերեան, Էօժէն եւ Նազելի Էքմէքճի, տորթ. Եղիազար եւ Եսթեր Շիրաճեան, Ֆերիտ Սալիպեան, Երուանդ Էքմէքճի, Եղիշէ Մանուկեան, Պատրիկ Աֆէեան, Ալիս Սիսեռեան, Աւետիս եւ Նորա Մենշեան հիմնադրամները եւ տորթ. Ճորճ Էքմէքճի առողջապահական ֆոնտը: ԱՄՆ Արեւմտ. ափի շրջանաւարտից միութեան մէջ հաստատուած են Ալպեր եւ Թէրի Պեզճեան եւ Տիգրան Ապաճեան հիմնադրամները:

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր բարերար անհատներու եւ կազմակերպութիւններուն, Հայկազեան համալսարանին ու այն բոլոր մարմիններուն, կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք փարբեր ձեւերով աջակից եւ գործակից եղան դպրոցի աշխատանքներուն, նպաստելով անոր հեզասահ ընթացքին, յաջողութեան եւ վերելքին: Յատուկ շնորհակալութիւն Հայ աւետ. Ա. եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ խնամակալութեան, ՀԱԳ-ի հոգաբարձութեան, պատուակալ փնթրէնին, օժանդակ մարմիններուն, գործակից ուսուցիչներուն եւ պաշտօնեաներուն, Հայ աւետ. հրապարակչական գրասենեակին ու Տպարան Քեսպենեանին:

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԷՃ

Սեփականություն ՀԱՅ ԱՐԵՏ. Ա. ԵԿԵՂԵՑԻԻ

Մեքսիք փողոց, Պեյրուտ - Լիբանան

2020 - 2021 - 2022 ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՐՋԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Վեր. ՀՐԱՅՐ ԶՈԼԱԳԵԱՆ
Պատ. ԺԻՐԱՐ ՂԱԶԱՐԵԱՆ
Պր. ՆԵՐՍԷՍ ՊԱՂՏՈՅԵԱՆ
Պր. ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
Պր. ՀՐԱԶ ՀԱՍԸՐՃԵԱՆ
Պր. ՃՈՆԻ ՍԱՅԻԼԵԱՆ

(Նախագահ 2020-2021)
(Նախագահ 2021-2022)
(ատենապետ)
(փոխատենապետ)
(գանձապահ)
(խորհրդական)

ARMENIAN EVANG. COLLEGE

Mexique Street
P.O.Box 11-3672
RIAD EL SOLH BEIRUT 1107 2140
LEBANON
Tel. (01) 34 98 16

E-mail: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

المدرسة الارمنية الانجيلية العالية

شارع المكسيك
ص.ب. ١١-٣٦٧٢
رياض الصلح بيروت ١١٠٧ ٢١٤٠
لبنان
هاتف: ٣٤٩٨١٦ (٠١)

بريد الكتروني: secretary@aecbeirut.com.lb

www.aecbeirut.com.lb

